

# «ԱՆՎԾԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

14.07.2016 10:53



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է «**Անվճար իրավաբանական խորհրդատվություն**» դրամաշնորհային ծրագիրը:

Ծրագրի **օգուտոս ամսվա** փուլին մասնակցելու համար հայտարարվում է **փաստաբանների մրցույթ**:

**Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).**

ա) **անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում (բաղադրիչ 1),**

բ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում (բաղադրիչ 2),**

գ) **անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին (բաղադրիչ 3):**

## **Բաղադրիչ 1.**

**Օգուտոս ամսվա ընթացքում Տավուշի և Վայոց Ձորի մարզեր** այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Տավուշի և Վայոց Ձորի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար (**6-րդ և 7-րդ խմբեր**):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական ուղղվածությամբ փաստաբանները Երևանից, Տավուշի և Վայոց Ձորի մարզերից:**

## **Բաղադրիչ 2.**

**Օգուտոս ամսվա ընթացքում «Վարդաշեն» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներ** այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 6 փաստաբաններ** ընտրելու համար՝ **Երևան քաղաքից թվով 5 փաստաբաններ, Գեղարքունիկի մարզից 1 փաստաբան** ընտրելու համար (**6-րդ և 7-րդ խմբեր**):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական ուղղվածությամբ փաստաբանները Երևանից և Գեղարքունիկի մարզից:**

## **Բաղադրիչ 3.**

**Օգուտոս ամսվա ընթացքում** վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **թվով 3 փաստաբաններ** ընտրելու համար (**4-րդ խումբ**):

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող

վարչաիրավական ուղղվածությամբ փաստաբանները:

**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով Զեր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն լեզուներով՝ այն ուղարկելով [info@advocates.am](mailto:info@advocates.am) կամ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com) էլեկտրոնային հասցեներին:**

**Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը չչ փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:**

**Դիմում-հայտում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը և մարզը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:**

**Դիմում-հայտերի քննունման վերջնաժամկետն է 2016 թվականի հուլիսի 25-ը:**

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են **ծրագրում:**

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ:

**Ծրագրի համակարգող՝**

**Լյուդվիկ Դավթյան**

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

Հեռ.՝ 091 066 880

Էլ. փոստ՝ [lyudvik.davtyan@gmail.com](mailto:lyudvik.davtyan@gmail.com)

## Առաջարկվող նորություններ



**19.04.2016** ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ԵԱՀԿ ԱԶԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՒՄ Է ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ



**17.05.2016** «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



**14.06.2016** «ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ



**13.09.2016** «ԱՆՎԾԱՐ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ  
ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ»  
ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ  
ԾՐԱԳԻՐ

```
վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```